



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»  
Հայ-Ռուսական համալսարանի  
գիտության գծով պրոռեկտոր  
փ.գ.դ., պրոֆեսոր  
Պ. Ս. Ավետիսյան  
«09 դեկտեմբերի» 2022թ.

Հռիփսիմե Հովհաննեսի Հովսեփյանի «Ներքին աուդիտի խնդիրները դիսկերի բացահայտման և կանխման գործում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության» հիմնախնդիրների ամբիոնների 2022 թվականի դեկտեմբերի 09-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 13-22):

Մասնակցում էին՝

Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Ներսեսյան Կարեն Վասիլիի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Ոսկանյան Մարիամ Համբարձումի՝ տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, Չախոյան Էլիզա Միրայելի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Կարապետյան Էդգար Գագիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Պետրոսյան Իրինա Բորիսի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության» ամբիոնի վարիչ, Հանիսյան Հրայր Հովիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Հայրապետյան Վիկտորիյա Լեոնիդի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Ավետիսյան Անի Գրիգորի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Ամրոյան Արման Վազգենի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Մնացականյան Լիդա Արմենի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Հակոբյան Էսթեր Աշոտի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Հակոբյան Արմինե Արզումանի՝ ավագ դասախոս, Աղաջանյան Արմինե Վլադիմիրի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Գալստյան Անի Համլետի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Նաշիկյան Լիլիա Աշոտի՝ ավագ դասախոս, Պետրոսյան Հեղինե Գագիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Պետրոսյան Գարիկ Արմենակի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Կարապետյան Քրիստինե Գագիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Տիգրանյան Վարսիկ Իշխանի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դինամիկ զարգացող աշխարհի արդի պայմաններում գլոբալ փոփոխությունները կազմակերպությունների գործունեության բարելավման, արժեքի ավելացման, կառավարման ու վերահսկողական համակարգերի կատարելագործման համար նոր մարտահրավերներ, խնդիրներ և ռիսկեր են ստեղծում: Այդ խնդիրները ժամանակին լուծելու, ռիսկերն արդյունավետորեն կառավարելու և մարտահրավերներին խելամտորեն դիմագրավելու համար կազմակերպություններն անաչառ գնահատման կարիք են ունենում: Այս գործում իր ուրույն տեղն ունի կորպորատիվ կառավարման կարևորագույն տարր հանդիսացող ներքին աուդիտը:

Ինչպես ցանկացած մասնագիտություն՝ ներքին աուդիտը ևս ունի իր առաքելությունը, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև գործառույթները պատշաճ և արդյունավետորեն իրականացնելու համար պետք է բավարար չափով հասկացված, ընկալելի ու ընդունելի լինի ինչպես կազմակերպության կառավարող մարմինների և բարձրագույն ղեկավարության, այնպես էլ բուն մասնագիտական հանրության կողմից: Մասնագիտության հետ կապված թյուրընկալումները հանգեցնում են կազմակերպություններում ներքին աուդիտի գործառույթի նկատմամբ ոչ միանշանակ վերաբերմունքի և պահանջների առաջացման, կազմակերպական ու գործառնական բարդություններ և խնդիրներ են ստեղծում աշխատանքի արդյունավետ իրականացման համար, ինչպես նաև օրենսդրական կարգավորման տեսանկյունից որոշակի խոչընդոտներ առաջացնում:

Կազմակերպության արժեքի ավելացմանն ու գործունեության բարելավմանն ուղղված իր գործառույթների իրականացման ընթացքում ներքին աուդիտն այս կամ այն կերպ առնչվում է կազմակերպության ռիսկերի կառավարմանը: Այդ առումով կարևոր է հասկանալ և վերհանել ներքին աուդիտի ու ռիսկերի կառավարման գործառույթների հատման և փոխգործակցության հնարավորություններն ու խնդիրները:

Վերջին տարիների ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի հետ կապված զարգացումները ևս մեկ ազդակ են, որ մասնագիտության հետ կապված մոտեցումները, և մասնավորապես հանրային հատվածում ներքին աուդիտի կազմակերպումն ու

իրականացումը վերանայումների և համակարգային լուծումների կարիք ունեն: Սա իր հերթին նոր հարցեր ու հնարավորություններ է ստեղծում թե՛ իրավական և թե՛ կազմակերպական առումով ներքին աուդիտի գործառույթի արդյունավետության բարձրացման և առհասարակ ոլորտի զարգացման համար: Այս տեսանկյունից տեղական ու միջազգային փորձի ուսումնասիրությունը, համեմատագրումների կատարումը և մեթոդական նոր մոտեցումների մշակումը տարբեր ոլորտներում ներքին աուդիտի գործառույթի ներդրման ու զարգացման հարցում կարևոր դերակատարություն կարող են ունենալ:

Վերոհիշյալ հարցադրումների քննարկմանն ու որոշակի առաջարկությունների մշակմանն է նվիրված Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Հոփսիմե Հովսեփյանի ատենախոսությունը: Ներկայացված հիմնախնդիրներով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության գլխավոր նպատակն է բացահայտել ներքին աուդիտի հիմնական խնդիրներն իրեն ներհատուկ ռիսկերի կառավարման և կազմակերպությանը բնորոշ ռիսկերի բացահայտման ու կանխման գործում և ներկայացնել դրանց մեղմման, ինչպես նաև ներքին աուդիտի արդյունավետության բարձրացման ուղիները:

Նպատակի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

➤ ներկայացնել ներքին աուդիտի փիլիսոփայությունը, հստակորեն տարանջատել այն հարակից մասնագիտություններից և ուղղություններից՝ առանձնացնելով գլխավոր տարբերակիչ գծերն ու առանձնահատկությունները,

➤ վերհանել մասնագիտության ընկալման խնդիրներն ու դրանց դրսևորումները՝ ներկայացնելով դրանք շտկելու հնարավոր ուղիները,

➤ ուսումնասիրել ներքին աուդիտի իրականացման գծով տեղական և միջազգային փորձը, կարգավորման տեղական և միջազգային օրենսդրաիրավական դաշտը, կատարել համադրություններ և համեմատություններ՝ հասկանալու և բացահայտելու համար առկա խնդիրների ծագման աղբյուրներն ու բարելավման հնարավոր ուղղությունները,

➤ տարանջատել ներքին աուդիտին ներհատուկ հիմնական ռիսկերը,

➤ ներկայացնել ռիսկերի կառավարման գործընթացներում ներքին աուդիտի հնարավոր դերերը և ռիսկերի բացահայտման ու կանխման գործում վերջինիս հիմնական խնդիրներն ու դրանց մեղմման հնարավոր ուղիները:

#### ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ստացված արդյունքներն ունեն տեսամեթոդական և կիրառական նշանակություն, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթները ըստ հեղինակի հետևյալն են:

➤ «ՆԱԻ 3 գծեր» մոդելի վերլուծության և կիրառելիության գնահատման արդյունքում բացահայտվել են մոդելի հնարավոր բացերն ու առաջարկվել բարելավման ուղիներ:

➤ Կազմակերպության ընդհանուր վերահսկողական համակարգում ներքին աուդիտի դերն ու խնդիրները հստակեցնելու նպատակով մշակվել և ներկայացվել է կազմակերպության վերահսկողական համակարգի պարզեցված մոդել:

➤ Ներքին աուդիտի հաշվետվողականության համակարգի բարելավման, գործառույթների հստակեցման և արդյունավետության գնահատման համակարգի կատարելագործման նպատակով բացահայտվել են ՀՀ օրենսդրական խնդիրներն ու ներկայացվել լուծման ուղիները:

➤ Ներքին աուդիտի գործառույթների արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և ներկայացվել է ներքին ու արտաքին գնահատման ընդհանրական հայեցակարգ, ինչպես նաև աուդիտորական աշխատանքների պլանավորման գործընթացում ֆինանսական վերլուծությունների կիրառման մեթոդական մոտեցում:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկություններն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

Հետազոտության արդյունքները, բացահայտած խնդիրները, մշակված մոտեցումներն ու կատարված առաջարկությունները կարող են գործնական կիրառություն գտնել ներքին աուդիտին առնչվող օրենսդրաիրավական դաշտի կատարելագործման նախաձեռնություններում, իսկ կազմակերպությունների կառավարող մարմինների և խորհուրդների դեպքում՝ ուղենիշ հանդիսանալ կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման, ներքին աուդիտի գործառույթների արդյունավետության բարձրացման անհրաժեշտ հիմքերի և նպաստավոր միջավայրի ձևավորման, ինչպես նաև արդյունավետ գնահատման համակարգի ներդրման համար:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից: Նյութը շարադրված է 182 էջի վրա (առանց հավելվածների)՝ ներառում է 16 գծապատկեր, 19 աղյուսակ և գրականության 121 աղբյուր:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության ներածական մասում ներկայացվել են աշխատանքի նպատակն ու դրանից բխող խնդիրները, օբյեկտը և առարկան, հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Ձևակերպվել են ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը, ներկայացվել է աշխատանքի տեսագործնական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Ներքին աուդիտի տեսամեթոդական հիմքերը», ներկայացվել են ներքին աուդիտի էությունը, գիտամեթոդական հիմքերը, նպատակները, գործառույթներն ու տեսակները, կորպորատիվ կառավարման համակարգում ունեցած տեղն ու դերը, ռեսուրսավորման մոդելներն իրենց առանձնահատկություններով, թերություններով և առավելություններով: Այս գլխում ռիսկերը տարանջատվել են կազմակերպությանը բնորոշ ու ներքին աուդիտին ներհատուկ խմբերի և այդ տրամաբանությամբ ներկայացվել են ներքին աուդիտի դերերն ինչպես կազմակերպության ռիսկերի կառավարման, այնպես էլ ներքին աուդիտին հատուկ ռիսկերի բացահայտման և կանխման գործում:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Ներքին աուդիտի զարգացման միջազգային փորձը», ներկայացվել է ներքին աուդիտի կարգավորման միջազգային համակարգը՝ մասնագիտական կառույցները, գործունեության միջազգային հայեցակարգն ու ստանդարտները, պարտադիր և օժանդակ ուղեցույցները: Անդրադարձ է կատարվել տարբեր երկրներում և տարածաշրջաններում ներքին աուդիտի իրականացման առանձնահատկություններին, ներառյալ՝ կարգավորող օրենսդրափրավական դաշտը: Քննարկվել են նաև ներքին աուդիտի գլոբալ մարտահրավերները, ինչպես նաև ռիսկերի բացահայտման և կանխման գործում միջազգային փորձը:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Ներքին աուդիտի արդի վիճակը և հիմնական խնդիրները ՀՀ-ում», անդրադարձ է կատարվել ՀՀ-ում ներքին աուդիտի կարգավորման նորմատիվ-իրավական դաշտին և առկա խնդիրներին, հարցումների արդյունքում ստացված և տեղեկատվական հարթակներում առկա հասանելի տեղեկատվության ուսումնասիրության ու վերլուծությունների հիման վրա ներկայացվել է ՀՀ կազմակերպություններում ներքին աուդիտի իրականացման ընդհանուր պատկերը, բացահայտվել են ռիսկերի բացահայտման և կանխման գործում ներքին աուդիտի հիմնական խնդիրներն ու դրանց շտկման հնարավոր ուղիները, ներկայացվել են ներքին աուդիտի գործառույթների արդյունավետության բարձրացման նպատակով ներքին և արտաքին գնահատման ընդհանրական հայեցակարգը, ինչպես նաև պլանավորման գործընթացում ֆինանսական վերլուծությունների օգտագործման հնարավորությունները:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում շարադրվել են հետազոտության ուսումնասիրություններից և գնահատականներից բխող հիմնական եզրահանգումները և առաջարկությունները:

### ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են մի շարք թերություններ, որոնց մեջ կարևորում ենք առանձնացնել հետևյալները՝

1. Աշխատանքում առաջ է բերված մասնագիտության ընկալման խնդիրների վերհանումը, սակայն հասկանալի չէ, ինչ ընկալման մասին է խոսքը:
2. Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներից ու նորույթներից անհասկանալի էր 2-րդ և 3-րդ նորույթների էությունը:
3. «Ատենախոսության արդյունքների փորձաքննությունը և հրապարակումները» հատվածում բավականին հետաքրքիր էր այն հանգամանքը, որ աշխատանքի հիմքում ընկած են շահույթ հետապնդող կազմակերպությունները, սակայն փորձաքննությունը կատարվել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի նիստերի, ինչպես նաև մասնագիտական հանդիպումների շրջանակներում:
4. Միևնույն ժամանակ, առկա են որոշակի բացթողումներ: Այսպես, 2.2 ենթազվխում եվրոպական երկրների փորձը ներկայացված է թուուցիկ, առանց մանրամասն դիտարկման: Դրա փոխարեն լայն ներկայացվել է Լատինական Ամերիկայի փորձը, որը Հայաստանի համար այդքան էլ կիրառելի չէ:
5. Ցանկալի կլիներ անդրադարձ կատարել նաև հետխորհրդային երկրներին, մասնավորապես ԵԱՏՄ անդամ-պետություններին, որոնք Հայաստանի հետ գտնվում են սերտ կապի մեջ տնտեսական և ֆինանսական ոլորտում, և ունեն ընդհանուր մոտեցում մի շարք օրենսդրական կարգավորումների մասով:
6. Այսպես, ատենախոսության 3.3 ենթազվխում «Ներքին աուդիտի պլանավորման գործընթացում ֆինանսական վերլուծությունների կիրառման հնարավորությունները

«ՀՀ բանկերի օրինակով» ներկայացված են ՀՀ բանկերի ֆինանսական անկախության, ակտիվների և սեփական կապիտալի շրջանառելիության, շահութաբերության գործակիցները, սակայն սպառիչ ներկայացված չեն ներքին աուդիտի անհրաժեշտ մնացած տարրերը (ռիսկերի կառավարման մոդելը, գործընթացների վերահսկման մեխանիզմները և այլն), հեղինակը չի անդրադառնում նաև Բազելյան ստանդարտներին:

7. Ատենախոսությունում առկա են նաև որոշակի տեխնիկական սխալներ, որոնք չեն ազդում ատենախոսության բովանդակության վրա:

#### ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում հետազոտության արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:

Հռիփսիմե Հովհաննեսի Հովսեփյանի «Ներքին աուդիտի խնդիրները ռիսկերի բացահայտման և կանխման գործում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում դրված նպատակը և խնդիրների լուծումը ռիսկերի բացահայտման ու կանխման գործում ներքին աուդիտի հիմնական խնդիրների և ներքին աուդիտ մասնագիտության զարգացման, ինչպես նաև ՀՀ-ում ոլորտի բարելավման համար շատ կարևոր են և անհրաժեշտ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Հռիփսիմե Հովհաննեսի Հովսեփյանի «Ներքին աուդիտի խնդիրները ռիսկերի բացահայտման և կանխման գործում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական



ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝  
Հայ-Ռուսական համալսարանի  
Էկոնոմիկայի և ֆինանսների պրոֆեսոր,  
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

Է. Մ. Սանդոյան

Հայ-Ռուսական համալսարանի  
Էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ,  
տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ՝

Մ. Ա. Ոսկանյան

Հայ-Ռուսական համալսարանի  
տնտեսագիտության տեսության  
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների  
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու՝

Ի. Բ. Պետրոսյան

Հայ-Ռուսական համալսարանի  
Էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի դոցենտ,  
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Լ. Լ. Հանիսյան

Հայ-Ռուսական համալսարանի  
Էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի դոցենտ,  
տնտ. գիտ. թեկնածու, ավագ դասախոս՝

Ա. Վ. Ամրոյան

Հայ-Ռուսական համալսարանի  
գիտական քարտուղար,  
բան. գիտ. թեկնածու՝



Ռ. Ս. Կասաբաբովա